ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՒ ՍԻՐՈ ԿԱՆԹԵՂ ՀԱՆՁՆՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ապրիլի 29-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Սպիտակ աղավնի» միջազգային հիմնադրամի հիմնադիր Ջանի Ռիջեւիթսին: Նորին Սրբությանը հանձնվեց խաղաղության եւ սիրո վառվող կանթեղը՝ խաղաղության ջատագովման մեջ իր մեծ ավանդի եւ վաստակի համար:

Շնորհակալություն հայտնելով պարգեւի համար՝ Նորին Սրբությունը նշեց, որ խաղաղության կանթեղի լույսը պետք է ճառագի յուրաքանչյուր մարդու կյանքում, որպեսզի ամեն մարդ ապրի եւ առաջնորդվի Աստծո պատվիրաններով ու պատգամներով, եւ մարդկությունն ապրի համերաշխության ու խաղաղության մեջ:

«Մեր ժողովուրդը գիտե բարձրորեն գնահատել խաղաղությունը՝ որպես հիմնարար արժեք»,-նշեց Հայոց Հայրապետը՝ ավելացնելով, որ այս լապտերը գալիս է վառվելու Հայաստան երկրում՝ զորացնելու մեր ժողովրդի հոգուց ճառագող խաղաղության եւ սիրո ջահը:

Այնուհետեւ «Սպիտակ աղավնի» միջազգային հիմնադրամի գործադիր տնօրենը ներկայացրեց հիմնադրամի գործունեությունը:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը: